ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)
2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.
գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան - ի.գ.թ
գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.
Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.
Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.
Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
էլ. կայք՝
http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 8 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.12.2019
Հանձնված է տպագրության
15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)

2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.
зам. главного редактора
Карен Геворгян - к.ю.н.
зам. главного редактора
Ашот Петросян -
ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Николай Стойко - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Давид Аветисян - к.ю.н.
Артур Вагаршян - д.ю.н.
Сергей Аракелян - д.ю.н.
Ваге Оганнесян - д.ю.н.
Тарон Симонян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նորայր Բալայան
«Ի էլ էլ գործընկերություն» իրավաբանական գրասենյակ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Իրավական պետության նորմատիվ իրավական ակտերում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում, որպես կանոն, դրվում է այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը իրավական պետության և իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկն է: Իրավակարգավորումների կանխատեսելիության և իրավական ակնկալիքների իրագործման ապացույց է համաչափության սկզբունքը (հունարեն՝ սիմետրիա):

Համաչափության սկզբունքի հիմքն է Նյուտոնի 3-րդ օրենքը, մասնավորապես՝ երկու մարմինների փոխազդեցությունները միմյանց հավասար են և հակառակ ուղղված: Հիմալայների Ռաջա Յոգան գրում էր. «Անձի կատարած յուրաքանչյուր քայլ հարկադրում է քեզ կատարել հանդիպակաց քայլ»[1]: Հռոմեական իրավունքում գործում էր հետևյալ դրույթը. «Ով օգտագործում է իր իրավունքը, չի խախտում ոչ մեկի իրավունքը»[2]:

Ե՛վ իրավագործնական կյանքում, և՛ իրավունքի տեսության մեջ որպես համաչափության ինքնուրույն միջոց կամ մեթոդ կիրառվում է իրավական համաչափությունը: 1995 թվականին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի 44-րդ հոդվածը սահմանում էր. «Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Սահմանադրության 23-27-րդ հոդվածները վերաբերում էին մտքի, խղճի, կրոնի, կարծիքի արտահայտման, հավաքների, միավորումների ազատություններին և հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքին: Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ *մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված դեպքերում*՝ բացառությամբ կյանքի, դաժան վերաբերմունքի, անձնական կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության, անմեղության կանխավարկածի իրավունքների: Այսինքն՝ նորանկախ Հայաստանի իրավական դաշտում հիմք դրվեց համաչափության սկզբունքին:

2004 թվականին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 8-րդ հոդվածը սահմանում է, որ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Օրենսդիրը սույն

[1] https://www.carloscardosoaveline.com/the-law-of-symmetry/
[2] **Գ.Գ. Թորոսյան, Ս.Լ. Թորոսյան,** Իրավունքի չարաշահում, Երևան, 2019, էջ 9:

նորմատիվ պատվիրանի միջոցով սահմանել է վարչարարության համաչափության սկզբունքը: Հանուն արդարության հարկ է նշել, որ մինչ սույն օրենքի ընդունումը ՀՀ Ազգային ժողովը ընդունել էր ՀՀ քրեական օրենսգիրքը, որի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»: Թեև օրենսդիրը չէր սահմանում «համաչափություն» եզրույթը, սակայն տվյալ իրավանորմի տառացի մեկնաբանությունը վկայում է, որ կիրառվող իրավական ներգործության միջոցը պետք է լինի համաչափ հանցանքի ծանրությանը, հանցանք կատարած անձնավորությանը և այլ հանգամանքներին: Մինչ այդ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածը սահմանում էր, որ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո համաչափության սկզբունքի վերաբերյալ իրավանորմերը սահմանվեցին Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածներով: Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն. *«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:*

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն. *«Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:* Ըստ էության առկա էր սահմանադրական բարեփոխումների նույն տրամաբանությունը համաչափության սկզբունքի հետ կապված, ինչը արդեն իսկ արձանագրված էր 1995 թվականի Սահմանադրության տեքստի մեջ:

Համաչափությունը՝ որպես ամբողջական սահմանադրական սկզբունք, Սահմանադրությամբ արձանագրվեց միայն 2015 թվականի բարեփոխումներից հետո: Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն. *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

Վերջիվերջո, համաչափության սկզբունքի կիրառման օգտակար կամ բացասական առանձնահատկությունները ինչպե՞ս կարող ենք բացահայտել իրավական հարթությունում, արդյո՞ք յուրաքանչյուր դեպքում հարկավոր է հիշել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած բանաձևը, թե՞ պետք է սահմանադրական սկզբունքը բացահայտել իրավակիրառ մարմինների արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա: Իրավական նորմերի մեկնաբանման

տառացի և իրավական նորմերի բաղդատման կանոնները հաշվի առնելով՝ կարող ենք ուսումնասիրության առարկա դարձնել համաչափության սահմանադրական սկզբունքը.

- հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար.
- ընտրված միջոցները պետք է լինեն պիտանի և անհրաժեշտ.
- Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Ելնելով բացասման-բացասում կանոնից՝ հարկ է նշել, որ համաչափության մասին խոսք լինել չի կարող, եթե սահմանափակման միջոցը չի հետապնդում Սահմանադրությամբ սահմանված նպատակը: Սահմանադրությամբ հռչակված սկզբունքի երկրորդ նախադասությունը վկայում է այն մասին, որ սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է *համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Պարզ է, որ առաջին նախադասության մեջ օգտագործվող եզրույթները՝ «պիտանի», «անհրաժեշտ», առաջին անգամ չէ, որ կիրառվում են. մինչ այդ դրանք տեղ են գտել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում: Թե ինչ նպատակի մասին է խոսքը, այդքան էլ պարզ չէ, քանի որ Սահմանադրությամբ չկա նախատեսված առանձին նորմատիվ պատվիրան Սահմանադրության նպատակների վերաբերյալ, ինչը իր հերթին վկայում է վերացական իրավական սկզբունքի մասին: Սակայն ողջամտորեն կարող ենք պնդել, որ սահմանափակման առարկա կարող են լինել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, որոնք սահմանված են Սահմանադրության 2-րդ գլխով:

Գործնականում համաչափության սկզբունքի կիրառելիության մասին առաջին անգամ անդրադարձ է կատարել Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ: Բարձր դատարանը արձանագրել է, որ *սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):* Այնուհետև Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է իրավական համաչափության սկզբունքին: Օրինակ՝ ՍԴՈ-1061 որոշման մեջ նշել է, որ տվյալ դեպքում վերոհիշյալ օրենքով չի պահպանվել իրավակարգավորման համաչափության սկզբունքը նշված կատեգորիայի անձանց նկատմամբ, հաշվի չի առնվել նրանց լեգիտիմ ակնկալիքների իրացման հնարավորությունը:

ՍԴՈ-1224 որոշման մեջ արձանագրել է, որ իրավական որոշակիության և/կամ համաչափության սկզբունքի տեսանկյունից վիճարկվում է նաև օրենքի 46–րդ հոդվածի 7-րդ մասի այն դրույթը, ըստ որի՝ պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը հաշվարկվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.02 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ դրույթը ձևակերպված է բավարար հստակությամբ և չի զրկում քաղաքացուն իր վարքագիծը վիճարկվող նորմի հետ համատեղելու հնարավորությունից:

ՍԴՈ-1234 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության և մարդու հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքների պահանջներից չի բխում դատարանի այնպիսի եզրահանգումը, համաձայն որի՝ «Աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը

գերակշռում է հասարակական շահին»[1], նկատի ունենալով, որ հրապարակումները վերաբերում են հանրային ճանաչում ունեցող մարդկանց, և նպատակը հասարակության մեջ առկա կասկածների փարատումն է:

Շուլիի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է. «26. Կիրառված ներգործության միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է առկա լինի արդարացի հավասարակշռության սկզբունքը[2], իսկ Անկերլը ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատավարության ընթացքում յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, միաժամանակ՝ այնպիսի ապացույցներ, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում[3]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համաչափության սկզբունքի վերաբերյալ արձանագրել է հետևյալ բանաձևը. մասնավորապես կիրառվող իրավական ներգործության միջոցը պետք է լինի հավասար կամ նվազ հետապնդվող նպատակին, հակառակ դեպքում համաչափության մասին խոսք լինել չի կարող:

Ինչ վերաբերում է իրավակիրառ պրակտիկային, ապա հարկ է նշել, որ համաչափության սկզբունքի փիլիսոփայությունը այդքան էլ մեծ տարածում չունի: Այսպես, վարչական մարմինները վարչական վարույթ են հարուցում խախտված իրավունքների պաշտպանության նկատառումով, սակայն այդ վարույթը այնքան երկար է տևում, որ արդեն անհրաժեշտություն է առաջանում քննարկել այն հարցադրումը, թե արդյո՞ք վարչական վարույթը օգտակար է իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, արդյո՞ք պիտանի է և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2019 թվականի մարտի 22-ի որոշմամբ արձանագրել է, որ քննարկվող իրավահարաբերությունների շրջանակներում կիրառելի է ոչ թե Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված վարչական իրավախտման արձանագրությունն իրավախախտի բացակայությամբ կազմելու և վերջինիս ուղարկելու կանոնը, այլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված կանոնը, որի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը նախքան վարչական տույժի մասին որոշում կայացնելը պետք է ապահովի իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրության և մյուս նյութերի պատշաճ կազմումը: www.datalex.am կայքից տեղեկանում ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումից հետո քաղաքացիների կողմից վարչական ակտը դատական կարգով բողոքարկելուց հետո Երևանի քաղաքապետարանը սեփական նախաձեռնությամբ վերացնում է վարչական տույժեր նշանակելու մասին որոշումները (ՎԴ/5724/05/19, ՎԴ/5760/05/19 և այլ վարչական գործեր)[4]:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը վերաբերում է վարչական մարմինների միմյանց փոխադարձ օգնություն տրամադրելուն: Սույն նորմատիվ պատվիրանի նպատակը այն է, որ վարչական մարմինը իր առջև դրված առաքելությունը իրագործի իրավական կարգավորումներով սահմանված ժամկետներում և վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը դարձնի արդյունավետ: Սույն իրավական նորմը սերտորեն փոխկապված է համաչափության սկզբունքի հետ, քանի որ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Փոխադարձ օգնության գա-

[1] http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf
[2] https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-175158%22]}
[3] https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22Ankerl%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22],%22itemid%22:[%22001-58067%22]}
[4] http://ell.am/am/news/276

դափարը դրսևորվում է հենց ընտրված միջոցների անհրաժեշտ և պիտանի լինելու պարագայում, քանի որ մի շարք դեպքերում մի վարչական մարմինը ավելի շատ տեղեկատվության է տիրապետում, քան մյուսը: Օրինակ՝ ՎԴ/9320/05/16, ՎԴ/8625/05/16 վարչական գործերի շրջանակներում ՀՀ վարչական դատարանը արձանագրել է. *«ք.Երևան, Փափազյան / Կոմիտաս խաչմերուկի նշված հատվածում բացակայում է նաև «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «Լրացուցիչ տեղեկատվության նշաններ (ցուցանակներ)» բաժնի 8.6.1 «Տրանսպորտային միջոցի կանգնեցման ձևը կայանման տեղերում» լրացուցիչ տեղեկատվության նշանը...»:* Համայնքներում ճանապարհները երթևեկության նշաններով կահավորելու գործունեությամբ զբաղվում են տեղական ինքնակառավարման մարմինները: Տվյալ իրավիճակում դատարանը արձանագրել է այն փաստը, որ հիշյալ հատվածում բացակայում է ճանապարհային երթևեկության նշանը, հետևաբար՝ անձի նկատմամբ իրավաներգործության միջոցը կիրառելը իրավաչափ չէ: Ուստի Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինը իրավական կարգավիճակից բխող գործառույթները իրականացնելու, այսինքն՝ ճանապարհային երթևեկության նշան տեղադրելու համար, ՀՀ ճանապարհային ոստիկանությունը պարտավոր էր իրազեկել Երևանի քաղաքապետարանին ՀՀ վարչական դատարանի արձանագրած վայրում ճանապարհային երթևեկության նշանով կահավորելու համար:

Վարչական իրավունքի տեսության մեջ համաչափության սկզբունքի ուղղակի չնախատեսումը չի արգելել տվյալ հիմնարար դրույթի կիրառելիությանը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանում է. «*Եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ*»: Օրենսդիրը բավարար և պիտանի է համարել բանավոր դիտողության կիրառումը որպես ներգործության միջոց վարչական իրավախախտման կատարման սուբյեկտի նկատմամբ: Թեև այդ սկզբունքն իրավաստեղծ մարմինը պաշտոնապես չի ամրագրվել, սակայն լուռ գործել է՝ հաշվի առնելով դրված նպատակը և դրան հասնելու միջոցները: Ցավոք, Հիմնական օրենքով արձանագրվելուց հետո տվյալ սկզբունքի էությունը չբացահայտվեց վարչական իրավահարաբերություններում, առհասարակ իրավունքի այլ ճյուղերի կարգավորման առարկա համարվող հարաբերություններում: Եթե մի պահ փորձենք համեմատական վերլուծության ենթարկել Սահմանադրության 2-րդ գլխով արձանագրված հիմնարար դրույթները՝ արդար դատաքննության իրավունքը, վնասի հատուցման իրավունքը, որոշակիության սկզբունքը, հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը և այլն, ապա կարող ենք փաստել, որ համաչափության սկզբունքը ըստ էության ունի առաջնային դեր: Օրինակ՝ յուրաքանչյուր ոք ունի վնասի հատուցման իրավունք, եթե վարչական մարմինների ոչ իրավաչափ գործողություններով պատճառվել է վնաս: Այսինքն՝ վնասի հատուցման իրավունքի ծագման համար հարկավոր է երկու հիմքերի առկայություն՝ ոչ իրավաչափ գործողություն և պատճառված վնաս: Եթե առկա է պատճառված վնաս, սակայն բացակայում է վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողությունը, ապա չի կարող խոսք լինել անձի՝ վնասի հատուցման իրավունքի մասին: Ուստի կիրառվում է նաև համաչափության սկզբունքը այնքանով, որքանով վարչական մարմնի կատարած գործողությունները պիտանի և անհրաժեշտ են անձի՝ Սահմանադրությամբ հռչակված տեղեկություններ ստանալու իրավունքի իրագործման համար:

Կարելի է արձանագրել, որ ինչպես օրինականության սկզբունքը, այնպես էլ համաչափության սկզբունքը դիտարկվում են միևնույն հարթության վրա և վարչական իրավահարաբերությունների կարգավորման համար նախատեսված սկզբունքներից յուրաքանչյուրի կիրառմանը զուգահեռ կարող է կիրառվել համաչափության սկզբունքը՝ համենայն դեպս մտաբերելով եվրոպական նախադեպային իրավունքի սահմանած բանաձևը՝ կարգավորել վարչական բնույթի իրավահարաբերությունները:

ПРИНЦИП АСИММЕТРИИ В АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВЫХ ОТНОШЕНИЯХ

Норайр Балаян
Кандидат юридических наук, юридическая фирма «И Эл Эл партнерство»

Принцип юридической асимметрии в теории права является основополагающим принципом. Этот принцип был впервые закреплен в Конституции в 2015 году. Меры, выбранные для ограничения основных прав и свобод, должны быть пригодными и необходимыми для достижения цели, установленной Конституцией. Этот принцип широко используется в административно-правовых отношениях, так как он впервые был предусмотрен законодательным актом в этой области в качестве самостоятельного принципа.

Принцип асимметрии обычно не применяется административными органами, в свою очередь, способствует неправомерному ограничению прав и свобод человека. Если административные органы будут следовать этому конституционному принципу, это будет способствовать установлению и укреплению правопорядка.

THE PRINCIPLE OF ASYMMETRY IN THE ADMINISTRATIVE LEGAL RELATIONS

Norayr Balayan
Candidate of legal sciences, Law Firm "ELL Partnership" law firm

The principle of legal asymmetry in the theory of law is the principle of the principle. This principle was first recorded in the Constitution of the RA in 2015. The means chosen for restriction must be commensurate to the significance of the basic right or freedom being restricted. This principle is widely used in administrative-legal relations, since it was first recorded by the legislative act in this area as an independent principle.

The principle of asymmetry is usually not applied by administrative bodies, in turn, it contributes to unlawful restriction of human rights and freedoms. If the administrative bodies follow this constitutional principle, this will help to establish and to strengthen the rule of law.

Բանալի բառեր – *համաչափություն, պիտանի, արդարացի, հավասարակշռում, իրավական միջոց, սահմանափակում:*
Ключевые слова: *асимметрия, пригодность, справедливый баланс, правовое средство, ограничение*
Kew words: *asymmetry, suitability, fair, balance, legal tool, limitation*